



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

30.04.2013թ. N-----

**Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ**

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ**

**Կուրսքի մարզի հարգարժան քնակիչներ**

Շնորհավորում եմ Աշխատանքի օրվա առթիվ և մաղթում, որ Ձեր գործնական հաջողությունները մաս կազմեն ինչպես մարզի, այնպես էլ մեր հանրապետության տնտեսության հզորացմանն ու ժողովրդավարական արժեքների լիարժեք ամրապնդմանը:

Այս խորհրդանշական տոնի կապակցությամբ պետք է նշեմ նաև, որ Մայիսի մեկը հայ ազգի համար յուրօրինակ է, քանզի հազարամյակներ շարունակ մենք կարողացել ենք համայն աշխարհին ապացուցել մեր աշխատասիրությունն ու աշխատանքի նկատմամբ ունեցած բացառիկ վերաբերմունքը, ինչպես նաև ինքներս ենք համոզվել, որ դա է երկրի զարգացմանը նպաստող միակ ճիշտ ուղին:

Դարձյալ շնորհավորում եմ և փաստում, որ ջանասիրության, աշխատանքի նկատմամբ բարձր պատասխանատվության պարագայում մենք կկարողանանք իրականություն դարձնել մեր և գալիք սերունդների երազանքները:

Հարգանքներով

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ